

Ն Ե Ի

Ստի տուրակը թիկունքին կապած,
 Նենգութեան անարդ դրոշմ ճակատին,
 Սմբարտաւանի կուռ գօտին հագած,
 Մեֆիստոֆելի ժպիտն երեսին,
 Կախարդ, մատնիչի ցուպը ձեռք առած,
 Թռչուն որսալու երդումը բերնին,
 Իւր որսն էր փնտռում դէր խնդազին.
 «Մերկին տաք հագուստ, քաղցածին կուշտ հաց
 Նեղեալին փրկանք, վշտին մխիթար.»
 Հայրենասիրի ծիրանին հագած
 Այդ էր քարոզում դէր անդադար:
 Ամեն տեղ նորան հալածում էին
 Ամենքը նորան անարգում էին
 Միամիտ Հայն էր որ չէր ճանաչում
 Մինչև հասաւ այս թշուառ վիճակին.
 Քանի անմեղներ ձգեց իւր ծուղակ.
 Ողջ Հայութիւնը արեց խայտառակ,
 Խլեց շատերից ոգին Հայութեան,
 Բրիշակ արեց և տուն և վաթան.
 Կորիւր, հեռացիւր ոգիդ կորստեան
 Մենք շատ ենք տանջուել քո չար ձեռքերից.
 Գտիւր քեզ համար մի այլ օթեան.
 Վիրաւոր Հայը գարշում է քեզնից:

1 Մարտի 1908

Մ. Ենգիւրեան